# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

**N ՀԿԿ-ՄԱԱՊՁԲ-22/09-1**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **«22» 12. 2022թ.**

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Յու.Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ-ն, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 22.12.2022թ.-ին կնքված **ՀԿԿ-ՄԱԱՊՁԲ-22/09-1** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

## 1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀԿԿ-ՄԱԱՊՁԲ-22/09-1** ծածկագրով գնման պայմանագրի 3.1 կետով սահմանված՝ 1 781 470 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, գինը ավելացնել մինչև տասը տոկոսի չափով, այն է՝ 81 951 (ութսունմեկ հազար ինը հարյուր հիսունմեկ) դրամով սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել և իրականացնել վճարումները սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե** | **«Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ** |
| **ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա** | **Հասցե՝ ք.Երևան, Արին Բերդի 24/5** |
| **Ֆ/Ն գործառնական վարչություն** | **Ինեկոբանկ ՓԲԸ** |
| **ՀՎՀՀ 00243582** | **Հ/Հ 11817068501000** |
| **Հ/Հ 900011038685** | **ՀՎՀՀ 02239171** |
| **Գլխավոր քարտուղար** | **Տնօրեն** |
| **Գ. Յու.Մկրտչյան** | **Մ.Մեհրաբյան** |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված
<< 22 >> . 12. 2022թ.
*ՀԿԿ-ՄԱԱՊՁԲ-22/09-1 ծածկագրով գնման*
*պայմանագրի թիվ 1 համաձայնագրի*

**Վճարման ժամանակացույց**

| Ապրանքների մատակարարման | | | | | | | | | | | | | | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 39713432 | Փոշեկուլ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 45150 | 45150 |
| 2 | 31681100 | Էլեկտրական պարագաներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 36800.4 | 36800.4 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե
ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա
Ֆ/Ն գործառնական վարչություն
ՀՎՀՀ 00243582
Հ/Հ 900011038685
Գլխավոր քարտուղար
Գ. Յու.Մկոյան

_______________
(ստորագրություն) Կ.Տ

«Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երեւան, Արին Բերդի 24/5
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 11817068501000
ՀՎՀՀ 02239171
Տնօրեն
Մ.Մեհրաբյան

_______________
(ստորագրություն) Կ.Տ